

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мпакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է ֆ օ ն № 253.

ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խառնաշաւիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է ֆ օ ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դասնակցութիւն կոյճիւնների հետ.—Ներ-
քիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Դարձեալ մեր
ցանկերի մասին. Նամակ Այլաքանդակագիր. Նա-
մակ Սոցիալիզմ. Նամակ Ստաւրոպոլից. Նամակ
Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քիւն լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՈՂՈՆԱՆԵՐԻ ՀԵՏ

Այն ժամանակ, երբ Անգլիան մղում է
մեծ պատերազմ հարաւային Աֆրիկայի
հանրապետութիւնների դէմ, որպէս զի
ոչնչացնի նրանց անկախութիւնը, նոյն
Անգլիան շարունակում է մշակել իր կոյ-
ճիւնների համար ընդարձակ ինքնավարու-
թեան ծրագիրները: Անգլիան պատրաստ է
ամեն տեսակ զինում անել իր կոյճիւննե-
րին և միայն մի բան է պահանջում՝ չը
խախտել ընդհանուր անգլիական մեծ պե-
տութեան մարդկային թիւնը:

Անգլիական այնպիսի մեծ կոյճիւններ,
ինչպէս են Կանադան, Աւստրալիան, ունեն
արդէն տեղական ընդարձակ ինքնավարու-
թիւն և այժմ հարց է յարուցված կազ-
մել դաշնակցութեան նման մի միութ-
լիւն, որ կապեր պետութեան զանազան
մասերը որոշ ֆինանսական և զինուորա-
կան պայմանագրութեամբ:

Կոյճիւններին վերապահված ազատու-
թիւնը այնքան մեծ է, որ եւրոպական
մամուլի մի մասը, օրինակ «National Zei-
tung» նշանաւոր լրագիրը, կարծում է թէ
այդպիսի ազատութիւնը կարող է վնաս-
աւորել ինքն անգլիական պետութեան ամ-
բողջութեան համար: Այդ ինքնավարու-
թիւնը յիշեցնում է իր բովանդակու-
թեամբ եւրոպական սահմանադրութիւն-
ները, որոնք մի և նոյն ժամանակ կապ-
ված են Անգլիայի հետ առեւտրական դաշ-
նագիրներով: Կարծէք Աւստրալիան և
Կանադան մի մի անկախ մարմիններ են,
որոնք պարտաւորվել են Անգլիայի հետ կա-
պած դաշնակցութեամբ նախ՝ ա-
զատ առեւտուր ունենալ այդ կոյճիւն-
ներում և որոշ արտօնութիւններ վերա-
պահել անգլիական ապրանքների համար,
իսկ երկրորդ՝ միութիւն պահպանել պե-
տութեան պաշտպանութեան կարեւորու-
թիւն եղած ժամանակ:

Ինչպէս յայտնի է, երբ տարի արանից
առաջ, երբ անգլիական թագուհու յօրե-
լանի աւելի Լօւիսն էին ժողովել
Աւստրալիայի, Կանադայի և ուրիշ կոյ-
ճիւնների ներկայացուցիչները, մեծ հա-
մակրութիւն էր գտնում ծովային կայս-
րութեան մայրաքաղաքում պետութեան
զանազան մասերի զանակցութեան ծրա-
գիրը: Նոյն արամագրութիւնը տիրում է
և այժմ: Աւստրալիայի պատգամաւորնե-
րը, որոնք այժմ գտնվում են Լօւիսում
այդ ինքն անկախ լուրեր, յոյս ունեն
աշդուր-
թեամբ վերջացնել իրանց բանակցութիւ-
նը և ցանկալի կերպով ձեռնկրպել Աւստ-
րալիայի տեղական լայն ինքնավարութեան
ծրագիրը:

Անկասկած, պատերազմը ոչ թէ է խան-
գարում կոյճիւններին աշդուրթեամբ ա-
ռաջ տանելու իրանց պահանջները, այլ
և զգալի կերպով նպաստում է: Անգլիա-
կան կառավարութիւնը կամենում է ցոյց
տալ, որ նա պատրաստ է տեղական ամե-
նայայն և ընդարձակ ինքնավարութիւն
ընդհանուր կոյճիւններին և մի պայման է
գնում, որ նրանք մի լինեն Անգլիայի հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Վեց ամիս անցաւ այն օրից, երբ սկսվեց
անգլո-բոսնիական պատերազմը, բայց մինչև

այժմ էլ դեռ վիճելի է համարվում թէ ո՞վ է
արդարն ու մեղաւորը այդ արեւմտեան զրա-
մայի մէջ: Ուշագրութեան արժանի է այն հան-
գամանքը, որ քաղաքագէտներին, հրապարա-
կախօսներին յետոյ այժմ վէճի են բռնվել
պատկանելի գիտնականները, որոնք, ըստ ե-
րեւոյթին, իրանց խաղաղ առանձնաստեղծակ-
ներին զուրա ոչինչ գործ չը պիտի ունենային:
Վերջիս մի այդպիսի բանակաւ ընդհանուր
ուշագրութիւն է գրաւոր Գերմանացի հռչա-
կաւոր պատմաբան Թէօֆոր Մամզէն բողոքեց
պատերազմի դէմ, անուանելով նրան անար-
գարութիւն Անգլիայի կողմից: Այդ բողոքին
պատասխանեց Օքսֆորդի համալսարանի պրո-
ֆէսոր և հռչակաւոր լեզուագէտ Մաքս Միւլ-
լէր, որն ապացուցանում էր թէ Անգլիան քա-
ղաքակրթական գեր է կատարում, որ հարա-
ւային Աֆրիկայի հանրապետութիւնները ան-
մեղ գաղութներ չեն և անգլիական կառավարու-
թեան իրաւունքն է իր գաղութականութիւնները
անգլիացնել: Նորերս «Deutsche Revue»-ի մէջ
լոյս տեսաւ Մամզէնի պատասխանը Մաքս
Միւլլէրի դէմ: Հռչակաւոր պատմաբանը ան-
գլիական չէ և դատաւարտում է այն մարդ-
կանց, որոնք ուրանում են Անգլիայի կատա-
րած քաղաքակրթական մեծ գերը: Բայց նա
չէ կարողանում ծածկել և այն, որ Անգլիայի
ներկայ քայլը շատ ամօթալի է:

Կապի երկրի հողանրական հանրապետու-
թիւնների այժման առաջնակարգ և կորած
բեկորի մէջ կուտում է հին, յամառ կրօնա-
կան-քաղաքական ֆանատիկոսութիւնը մի
քաղաքակրթութեան դէմ, որ ոգեւորված է
ոչ-պակաս ֆանատիկոսութեան ձգտումով
չափազանց ամբողջ աշխարհը: Գոյութիւն
ունեն պատմական երեւոյթներ, որոնք վեր-
դուրեցնում են ամբողջ քաղաքակրթութեան
բարոյական զգացմունքը. այդ երեւոյթների
վրա դատաստան է անում և վճիռ է ար-
ձակում աշխարհի բարձր քաղաքական-բողոք
ազգերի ազնիւ մարդկանց հասարակական
կարծիքը: Այս դատաստանը գործադիր իշ-
խանութիւն չունի, այս պատճառով էլ նրա
վճիռը կարելի է անուանել զգայունքի քա-
ղաքականութիւն, բայց մի վճիռ է դա, որի
թերաբողք կարեւորութիւնը չէ, այլ իրաւուն-
քի զգացմունքը: Դժբաղդաւոր, վերջին տա-
րիներում մեղ վիճակվեց շատ այդպիսի
դէպքեր տեսնել. կան զանազան մարդկանց
և ցեղերի անուններ, որոնց չէ կարելի ար-
տասանել առանց ամօթելի Միւլլէրի գիտելու,
թէ ինչ նշանակութիւն ունի Անգլիան աշ-
խարհի համար: Բայց մենք, որոնք հա-
մար այժմ մօզա դարձած անգլիականութե-
թիւնը նորքան անհիշելի է, որքան արհա-
մարհելի, մենք՝ այսպիսիներս, դժուարու-
թեամբ ենք հաշտվում այն մտքի հետ, թէ
այժմ այդ ամօթալի անուանների մէջ ընկել է
և Անգլիայի անունը: Բօժներին վիճակը
մեղ, դերմանայիններս, թուում է վճռված,
և մենք արդէն սովորել ենք անօգնականի
պէս նայել այն չարիքին, որ կատարվում է
մեր աչքի առաջ: Բայց ինչ էլ բերէ ապա-
գան, անկասկածելի է մի բան. անգլիական
փառաւոր պատմութեան մէջ բացվում է մի
նոր էջ—դա՛նձի պայտօն կատարելը վի-
հէլմ Տէլլի ուղացած համախոհների վրա:

Պէտք է աւելացնել, որ «Հեռուէական
Պատմութեան» հռչակաւոր հեղինակի այս տո-
ղեքը շատ լաւ են համապատասխանում այն
բոլոր մարգկանց տրամադրութեան, որոնք
ուխտեալ անգլիականութեան չեն և որոնց համար
ամենից բարձր ճշմարտութիւնն ու արդա-
րութիւնն է:

ԴԱՐՁԵԱԼ ՄԵՐ ՑԱՒԵՐԻ ՄԱՍԻՆ

(Նամակ Գանձակից)

Նորերս պ. Լեւոն Սարգսեան իր մի գեղե-
ցիկ յօդուածում մի քանի թուղթի գծերով
ընդունեց մեր բուրժուա դատակարարը
անհիշելի նրա նազելի ներկայացուցիչներին: Լրագրական
յօդուածները անգոր են պատկերացնել այն
բարոյական ցեղը, որի մէջ օրէցօր աւելի ու
աւելի խորն է ընկղմվում մեր հասարակու-
թեան այն մասը, որի համար ս. Երրորդութիւ-
նը կազմված է փողից, և միմիայն փողից,
որը մարդու արժանաւորութիւնները չափում
է նրա զիւղած փողի քանակութեամբ, որի հա-

մար փող ունեցողը, ակցիօնեական ընկերու-
թիւնների տիրահաւակ հերոսը, միաւոր մարդ-
կանց գրպանների վրա արշաւանք գործող նաւ-
թային բանդիտը և խելօք է, և ազնիւ, և
վեհանքն ու միջնաւ անգամ գեղեցիկ, հարուստ
փետայ որոզող նաղելիների համար մի կատա-
րեալ Բեկլէգեբեան Ապօլոն.—մի խօսքով մարմ-
նացումն մարդկային բոլոր արժանաւորութիւն-
ների, թէ բարոյական, թէ մտաւոր և թէ
ֆիզիքական:

Ոչ միայն Սարգսեանների, այլ նոյն իսկ Զօ-
լանների գրիչներ են հարկաւոր պատկերացնե-
լու համար այն բարոյական այլանդակութիւնը,
որը ներկայացնում է մեր հասարակութեան
այդ «առաջաւոր» մասը: Ասում ենք առաջա-
ւոր, և նա ամենայն իրաւունքով իրան առա-
ջաւոր, բարձր դատակարգ է համարում, ո-
րպէստեա տեսնում է, որ ոչ միայն չունենոր,
մի կտոր, մի փոր հացի համար նահատակվող
մասսան, այլ նոյն իսկ, այսպէս ասած, ժողո-
վրդի ու երկրի աղը, ինտելլեկտ, կրթված,
գիւղամուր «ոյժերը» մողէնների նման տո-
ղում են նրա առջև ու անհերքելի միջոցնե-
րով աշխատում են մանկ նրա չըջնել, կապեր
հաստատել նրա հետ, ընկղմվելով միանգամից ընդ
միջոց ոչ միայն բուրժուայի ֆիզիքական, այլ և
բարոյական ճաբայի մէջ, մոռացութեան տալով
այն բոլոր, նրանց կարծիքով «ախմախութիւն-
ները», որոնցով մի ժամանակ զբաղվում էր
նրանց ուղեղը ուսանողական նստարանի վրա
կամ ուսուցչական անշուք սենեակում: «Ախ-
մախութիւններ» ճարպակալող բուրժուա ինտե-
լլեկտը անուանում է այն բոլորը, ինչ որ
յայտնի է մաքուր իդէալ, գաղափար ու բարո-
յական սկզբունքներ անունով: ԶԲ որ միաւոր
պատասխաններին յափշտակող այդ «ափիւ-
ցիկներ» խօսքերը հաց չեն տալիս, յաճախ տանում են դէ-
պի գրկանքներ, ուստի ուխտագրութ բուրժուա
ինտելլեկտի աչքում նրանք «ախմախութիւն-
ներ» են միայն: Գաղափար, բարոյական սկզբ-
ունքներ դաւանող ինչպէս կարող է ձեռք
բերել սեփական պալատից, աչք չաչցնող կա-
կարաւոր, կառքեր, նժողգներ, ծառաների վո-
մակ, տիկնոջ կամ սիրելիների անվերջ քանա-
ծոյցներին կարող է նա միթէ բաւարարու-
թիւն տալ մօզային խալաթաւէտ փառանքով
ու զանազան ոսկեղէն ու անկեղէն «զարու-
մանքներով». Նախկին «մախութիւններ» ինչպէս
կարող է պարարտացնել իր անպէտք մարմինը
ընտիր ուսեղեղներով ու խմելքներով:

Ինտելլեկտ և ոչ-ինտելլեկտ բուրժուա-
նէ որ ու գիշեր այդպիսի երջանկութիւն է
երազում միայն ու ձգտում նրան իր բոլոր ոյ-
ժերով: Ինքնաքանդակութեան մի նշույն ան-
գամ, անանական կրքերի գոնէ մի աննշան
սահմանափակում.—չը կայ ու չը կայ: Մեր
բուրժուա հասարակութեան առաջադեմութիւ-
նը այդ ուղղութեամբ կատարվում է ոչ թէ օ-
րերով, այլ ժամերով: Երէկվայ փողոցային լա-
կոտը, որը ան բարոյական վարքի պատճա-
ռով արտաքսված էր դպրոցի ստորին դասա-
րաններից, ստանալով միայն յայտնի միջոց-
ներով անցնելով ոսկէ տոպրակների շարքը,
այսօր փողոցով անցնելիս ալ ու ձախ ընդու-
նում է նրեթապալտ ամբոխի ու իր նմանների
երկրպագութիւնները, որոնց համար մեծ պա-
տի է նրա անմաքուր ձեռքը սեղմելը, որոնց
աչքում նա մի խնկելի հերոս է, այլ ոչ թէ մի
սոսկ ճարպիկ ժուլիկ: Բարոյական ապտակներ
ստանալու փոխարէն նա ամեն քայլափոխում
լսում է շողորթութիւն, անվերջ գովառանք-
ներ, հրապուրիչ, զննող արարածների նուրբ
հաճոյախօսութիւններ: Նա դառնում է նախան-
ձելի փեսացու, հարկերաւոր անգլեր են տրեկ-
վում նրա վրա, նրա առջև բացվում են բոլոր
դռները, նրան խլում են ձեռքից ձեռք, կար-
կուտի պէս նրա գլխին թափվում են անվերջ
հրաւէրներ, նրա համար քննող ախոյեանները
պատրաստ են իրար խեղդել, իրար ծանր պո-
կել բառիս բուն մտքով: Եթէ Զօլան հասարա-
կութեան փառած, քաղաքաւոր աչքերը անգամա-
հատող իր խիղախ գրչով թափանցէր մեր բուր-
ժուա հասարակութեան խորքերը, նա այնտե-

ղից դուրս կը բերէր այնպիսի Սակարներ ու
բարօնուհի Սանդորֆներ, որոնք ամենայն ի-
րաւունքով կարող էին պատուաւոր սեղ ընել
նրա «Դրամ» վէպի հռչակաւոր հերոսների կող-
քում:
Ս. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Մարտի 28-ին

Ինչքան պէտք է սարսափելիք մենք, եթէ
մի զօրաւոր ձեռք կարող լինէր մի հարուածով
մեր առջև բաց անել թշուառութեան այն սոս-
կալի տեսարանները, որոնցով այնքան լին է
մեր կեանքը: Եւ ուր պէտք է համար սրա
վերջը, ահա մի վերին աստիճանի ծանրալիւ
հարց, որը վաղուց պէտք է մեր ինտելլեկտ-
նայի մտածմունքի և հոգիի ապրկան դառ-
նար: Մինչև երբ պէտք է չարժանակի ա-
ռեւտրի և արհեստի այս աստիճանաբար ան-
կումը, իր հետ բերելով մի կենսունակ և աշ-
խոյժ ժողովրդի մտաւոր և ֆիզիքական աշ-
խատումը: Օրվայ թշուառութիւնը ընդունում
է մեծամեծ չափեր. գործելու ընդունակ, բայց
անգործ մնացած ժողովուրդը այսօր մեղ ներ-
կայանում է որպէս մի պրօլետարիատ, որը
իր նմանը չունի համարեա ամբողջ աշխար-
հում... չունի, ասում ենք, որովհետեւ մեր
պրօլետարիատը մենակ է, նա բարեկամ և իր
վիճակով հետաքրքրվող չունի, բացի թշուա-
ռութիւնը ու քաղցը:

Երկրթուղի, երթեւեկութիւն, աղագայ ա-
շդուրթիւններ, սրանք լոկ երազներ մնացին
և մեր ժողովրդի մի աչքի ընկնող մասը այ-
սօր, աւելի քան երբ եւ է, կարօտ է օգնու-
թեան: Փանի տանեակ և միջնա իսկ հա-
րկաւոր ընտանիքներ կը գտնէք Այլաքանդա-
պոլում, որոնք ամբողջ օրը քաղցած մնալուց
յետոյ, վաղվայ մասին են մտածում... Եւ սա-
կայն գիտէ այս մասին փարթամ ու կուշտ քա-
ղաքացին. նրա աչքերը կարող են թափանցել
իր մօտից անցնող թշուառի սրտի մէջ և
կարող այն անէ՞ք, որ նա ուղղում է դէպի
հաւասարութիւն չը սիրող մարդկութիւնը,
դէպի նրեթապալտ ժամանակ:

Եւ մինչդեռ քաղաքում թշուառութիւնն ու
աղքատութիւնը դեռ նոր են սկսում ընդար-
ձակվել և դեռ միայն մի քանի տարի է ինչ
սկսել են քաղաքային բանակը և թշուառ ար-
հեստաւորի համեստ ընտանեկան հանգիստը,
սրա փոխարէն մեղանից ոչ հետու մենք տես-
նում ենք մի աւելի մեծ չարիք, մի արմատա-
ցած թշուառութիւն... սա դաւառի գիւղերում
մեղ հասած ձաքներն են, որոնք այնքան սրտա-
ռուչ և յուսահատական են, որ մարդ մնում
է ապշած, թէ իսկապէս որքան տարաբաղ է
հայ գիւղացին, թէ նա ինչպիսի գրկանքների
և տանջանքների կարող է դիմանալ:

Բայց այս անգամ թողնենք գիւղացուց ու
և նորից վերադառնանք քաղաք: Մենք չենք
կարծում, որ Կովկասի մի այլ քաղաքի փողոց-
ներում աւելի անթիւ ու անհամար լինէին
դոնէդուր չըրող մուրացկաններ թիւը,
քան մեղ մօտ. քաղցած, մերկ, խճված մո-
ղերով, թշուառութեան սոսկալի կնիքը ճա-
կատներին ամեն մի քայլափոխում դուր կը
տեսնէք մեծ ու փոքր, տալայ և աղջիկ մու-
րացկաններ, որոնք իրանց չորացած ձեռքերը
մեկնելով ողորմութիւն են աղերսում:

Այս դեռ նրանք, որոնք քաղցի և կարօտի
անողորմ տանջանքներից մաշված իրանց չարտի
են դէպի փողոց, իրանց վրա առնելով մի ոտոր,
անգութ և նուառապատիւ կոչում.—«մուրաց-
կանութիւն», բայց դեռ քանի քանի ընտանեկ-
ներ կան, որոնք իրանց սեւ առաստաղի տակ
երանի են տալիս փողոցներում ժանգոտած կօ-
պէկներ հաւաքող դժբաղդներին:

Եւ այս թշուառութեան ծովի մէջ միակ ու-
րախալի դէպքը մեր քաղաքային վարչութեան
ձեռքով բացված Աղբատների խնամատար ըն-
կերութիւնն է, որ այս օրերս հաստատեց պ.
նախնադպետը: Խնամատար ընկերութեան նա-
խագահն է ուպրավայի անդամ պ. Յարութիւն
Բարսամեան, որը ամեն կերպ աշխատում է

ընկերութեան գործերին տալ լայն ծաւալ, կազմում է գործունէութեան ընդարձակ ծրագիրներ: Ինչ կասկած, որ պ. Բարսեղեանի նախագահութեան տակ գոյութիւն ունեցող խնամատար ընկերութիւնը ամեն բանով մաս- ջուր եւ բարձր պէտք է լինի: Չնայ կարող աջո- ղութիւն չը ցանկալ դեռ եւս ոչ մի նիւթական միջոց չունեցող ընկերութեանը, որի առջեւ գործելու առաքելքը այնքան ընդարձակ է եւ կարելիք չափազանց:

Այս օրերու քաղաքային նորաբաց դպրոցները ուսումնական վարչութեան կարգադրութեամբ դպրոցից արձակեցին այն բոլոր աշակերտնե- րին, որոնց ծնողները դեռ չէին վճարել ուս- ման վարձը: Արձակված աշակերտների թիւը երկու անգամ աւելի շատ էր, քան դպրոցում մնացածները: Բայց չնորհի երիտասարդ Բաղդասար Դրամբեանի՝ այդ աղքատ ծնողնե- րի գաւալներին մի մասը երկար չը թափա- ւեց փողոցներում: Պ. Դրամբեան քաղաքա- յին երկրասեան դպրոցներում սովորող 30 աղ- քատ աշակերտների ուսման վճարն ու անհրա- ժեշտ ծախսերը իր վրա առաւ, յատկացնելով տարեկան 300 ռուբլի եւ խոստացաւ այդպէս շարունակել ամեն տարի: Պարտին այդ մար- ղաւէր վարձուները ուրախութեամբ յիշատա- կելով, հրապարակական չնորհակալութիւն ենք յայտնում նրան: Պ. Մ.

ՆԱՄԱԿ ԱՂԱՆԻՑ

Ապրիլի 3-ին

Ապրիլի 2-ին ս. Կարապետ մայր եկեղեցու գաւթում կայացաւ ծխականների ժողովը եկե- ղեցական մի քանի հարցեր քննելու նպատա- կով: Ինչպէս եւ միշտ, այս անգամ էլ հասա- րակութիւնը փայլուն էր իր բարակալութեամբ: Ներկայ էր մօտ 30 մարդ: Ժողովի նախագահ Արշակ քահանայ Տէր-Ստեփանեան յայտնեց, որ երէցփոխ բժիշկ Մ. Մովսիսեան հրաժար- վում է, անկարող լինելով չարունակել պաշ- տօնը: Այս բժիշկ Մովսիսեան մի քանի խօս- քերով քաջատրեց իր հրաժարականի պատճառ- ները: Նա յայտնեց, որ ինքը ստանձնել է պաշտօն այն պայմանով, որ հաշուետեաները մի ամսվայ ընթացքում հաշիւ առնեն նախկին երէցփոխ Ա. Ամիրխանեանից (այս մասին ժա- մանակին հաղորդված էր «Աշակի»): Ինչպէս անցել է մի տարի եւ ինքը հաշիւ չէ ստացել նախկին երէցփոխից, որի պատճառով մնալով առանց փողի՝ անկարող է լինում ինքը բարե- կարգել եկեղեցին, կանոնաւորել երգեցողու- թիւնը, կարեւոր վերանորոգութիւններ անել, որպիսի նպատակով նա ստանձնել է երէցփո- խի պաշտօնը:

Հաշուետեանների կողմից խօսեց Վ. Ենիկօյ- փեան, յայտնելով որ հաշուետեանները շատ ան- դամ են հաշիւ պահանջել նախկին երէցփոխից, բայց նա հրաժարվում է հաշիւ տալ նրանց, ուստի առաջարկեց ժողովին միջոցներ ձեռք առնել նրանից հաշիւ ստանալու համար: Այս հարցի առիթով եղան առաջարկութիւնների դատ սկսել Ամիրխանեանի դէմ:

Այնուհետեւ հարց բացվեց մոմապահատի յանձնաժողովի մասին: Ինչպէս հաղորդել էինք, անցեալ տարի ծխականների ժողովը ընտրեց յանձնաժողովը՝ բաղկացած թեթ հոգուց՝ հաշիւ առնելու նախկին հոգաբարձուներից ու փախ- ված մոմապահատը նորից բանալ: Ժողովը գո- յացած արդիւնքի մի մասը պէտք է յատկացն- վեր քահանայական գանձանակին, որը եւ պէտք է վերացվէր: Անցաւ ժամանակ, իսկ դրա հետ փոխվեց եւ տրամադրութիւնը, մոռաց- վեց գանձանակի վերացման վճիռը: Ժողովում ոչ ոք չը յիշատակեց անցեալ տարվայ վճիռը եւ այդ սխալական երեւոյթ է: Վճիռ մի հարց, բայց վաղը քանդել երէկվայ վճիռը՝ այդ սխալանքների յատկանիշն է: Միւս կողմից յանձնաժողովը ծոյլ գտնվեց եւ ամբողջովին չը կատարեց իր ստանձնած պարտականութիւ- նը. յանձնաժողովը հաշիւ է առել միայն նախ- կին գործակալից, ինչպէս մի տարվայ ըն- թացքում նա կարող էր աւարտել գործը: Այս հանգամանքին մասնաւոր նպատակներ յանձնա- ժողովի անդամների մէջ ծագած անձնական խռովութիւններն ու երկպառակութիւնները:

Յանձնաժողովի խռովութիւնների պատճառ- ները պարզելով, նոր անդամները սկսեցին աղմկալի վէճ, որի պատճառով անկարելի եղաւ ժողովը շարունակել ժողովը փակվեց բժիշկ Մովսիսեանի առաջարկութեամբ, խնդրելով գործակալին՝ նշանակել երկրորդ բաղմամարդ ժողով՝ յարուցված հարցերը վճռելու համար:

Յ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ՍՍԱԻՐՈՊՈԼԻՑ

Մարտի 26-ին

Աշխարհի որ կողմում հայ չը կայ, Հայերը յօժար կամքով թողնում են հայրենիքը եւ գը- նում հեռաւոր երկիրներ զանազան գործերով: Մի տեղ միայն նրանք գնում են ոչ իրանց կամքով, այլ նրանց տանում է օրէնքը: Այդ տեղը սառը Սիբիրն է: Աքաղաղած հայերը այն- քան շատացել են, որ ջուկ քահանայի կարիք է զգացվում: Եթէ ի նկատի ունենանք, որ աք- սորեանների մեծ տոկոսը մեր գիւղականներն են, աւելի եւս խիստ կերեւալ նրանց հոգեւոր խնամքի կարեւորութիւնը: Մի քօպէ միայն երեւակայեցէք, թէ ինչքան թշուառ ու ողբալի է տանից, տեղից, հօրից մօրից, ընկեր հորեւանից եւ, որ ամենազրկաւորն է, մայր հողից կտրված գիւղացու հոգեկան դրութիւնը, նրա անյոյս, անդարման ցաւերը: Փոքր ի չափէ կարգացած մարդիկ են կարողանում հազիւ հաշտեցնել իրանց մեղքը՝ պատմի ծանրութեան հետ եւ հանգիստ խղճով տանում են այդ պատի- ժը: Բայց այլ է գիւղացու դրութիւնը, նրա համար կրօնական միջնորդութիւնը անգին զին ունի: Աքսորականների համար նշանակ- ված քահանային երկու տարվայ մոռնել եւ ճանապարհածախս պիտի հոգայ Աստուծանի թեմի ամբողջ ժողովուրդը: Թեմի առաջնորդի հրաւերով եւ օրհնութեան թղթով այստեղի գործակալը, 3-րդ հրաւերից յետոյ, հաղիւ կա- րողացաւ ժողով կայացնելու: Ահա թէ որքան գիտակցօրէն է վերաբերվում այստեղի հասարա- կութիւնը իր սեփական գործերից դուրս հար- ցերին: Ժողովը վճեց 200 ռուբլի յատկացնել եկեղեցու գումարից: Միծաղելի էր որոշման ձեւը. մի պարսն ասաց 200 ռուբլի բաւական է եւ ժողովականները, առանց ծանր ու բա- րակ անելու, ոչխարի պէս ընդունեցին նրա առաջարկը: Անշուշտ, եթէ այդ «ձայնաւորը» 400 ռուբլի ասէր, այդքան էլ գուցէ վճովէր, որ նպատակին աւելի յարմար էր:

Ժողովի վերջում երէցփոխ պ. Ենիկոյփեանը յայտնեց, որ աւագ-սարկաւազ Յարութիւն Բէկզիւլեանից այս 2 տարեկան աւելի է, ինչ ծառայում է եկեղեցում բոլորովին ձրի: Տիպ է, նա պատրաստվում է քահանայութեան Սամար- կանդի համար: Բայց երէցփոխը կարեւոր է համարում խնդրել ժողովին ստորագրութիւն բանալ յօդուս նրան եւ դրանով մի փոքր գոնէ վերաճարել նրա արած ծառայութիւնը: Ժողովը միտով ընդունեց այդ առաջարկը եւ իսկոյն խօսքից գործին դիմեց: Կարեւորը գումարի քանակութիւնը չէ, այլ այն, որ մեր ժողովուր- ղը ընդունակ է յարգել կրթված հոգեւորակա- նին: Յարութիւնը սարկաւազը բարձրագոյն կրթութիւն ունի, Մօսկվայի համալսարանը ա- ւարտելուց անմիջապէս յետոյ ընտրվում է քա- հանայացու եւ պատրաստվում այդ գործի հա- մար: Նա հիմա բոլորովին պատրաստ է, լաւ գիտէ եկեղեցու բոլոր կարգերը եւ երգ-չարա- կանները, աւելի լաւ գուցէ մեր «բաղում» բաղ- անութիւնը՝ տէրութիւններից եւ օր աւուր սուպատմ է մեր առաջնորդի եւ Սամարկանդի հրաւերին: Խ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւան, մարտի 19-ին

Խնդրում եմ ձեր թերթում մի անկէն չնոր- հել հետեւեալ նամակիս: Այն օրից, որ Երեւանում ստացվեց «Աշակի» № 47-ը, շատ հետաքրքիր պարտնէր, կար- ծելով, որ իբր թէ եւ եմ այդ №-ում երեւա- նից գրված Գ. ստորագրութեամբ նամակի հե- ղինակը, ձանձրոյթ են պատճառում ինձ իրանց չարունակ եւ անտեղի դիմումներով: Այդ մար- դիկ, որոնց աւելի հետաքրքրում է գրութեմի հեղինակին անձնաւորութիւնը, քան թէ ինքը գրութեմը, համոզված են, որ եթէ եւ այդ ժո- ղովում ներկայ լինելով, պարզեց համարեցի հեղինակը ապօրինութեան ու անկանօնութեան դէմ եւ այդ ժողովը անվաւեր համարեցի, ան- պատճառ նորից կանչել եւ լրագրութեան մէջ: Այդպիսի բռնադատումը անձնաւորութիւններից ամեն մէկի հետ առանձին-առանձին բացա- տրվելու անհանդի գրութիւնից ազատվելու հա- մար ստիպված եմ արանով յայտնել, որ եւ չեմ գրել այդ նամակը եւ այս խօսքերս վկայ եմ հրաւիրում «Աշակի» յարգելի խմբագրութիւնը: Բայց այս հերքումով ամենեւին չեմ ուզում ասել թէ հակառակ եմ պ. Գ.-ի ստանձնելին, ընդհակառակն, նա զբւլ է միայն ճշմարտու- թիւնը, թէ եւ շատ մեղով ոճով եւ զգուշաց լեզ- ւով, որ ամենեւին նպատակադարձոր չէ կա- րող լինել, քանի որ խօսքը մեր հոգեւորակա- նութեան եւ աղաների մասին է, որոնք շատ վաղուց վարժվել են անտուրանքութեամբ նա- յիլ այդպիսի բողոքների վրա: Այս մասին ա- ռանձնապէս իմ կարծիքս այն է, որ պէտք է բոլորովին անտես առնել նրանց եւ կարծում եմ ժամանակ է, որ մենք խնայենք մեր լրա-

դրութեան էջերը եւ չը զբաղենք նրանց հոգեւորականների ապօրինութիւնները կամ ա- զաների կամայականութիւնները արձանագրե- լով: Ցաւալին այն է, որ մինչդեռ մի կողմից ասպարէզվեց ինչում են աղէտ աղաները, միւս կողմից նրանց տեղը արագութեամբ բռնում են համալսարանից եկած դիպլոմաւոր աղանե- րը, որոնք աւելի վառ են, քան թէ առաջին- ները, քանի որ այս վերջինները գինված են հաստատիւր օրէնսգրքերով եւ նրանց անթիւ յօդուածներով ու յաւելուածներով... Գալով այն հանգամանքին, որ պ. Գ. խիստ տարօրինակ ուղեղների է հանդիպել դիպլոմա- ւոր գանգերի մէջ, դա ամենեւին էլ զարմա- նալ չէ: Ընդհակառակն, միշտ պէտք է զար- մանալ, երբ նրանց մէջ հաղարից մէկ օրինա- կելի տիպեր կը գտնվեն:

Լեւոն Մարկոսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 29-ին

Երեւանում, ուր գնացել էի այնտեղի հայ զինւորների հոգեւոր պէտքերը կատարելու, «Աշակի» № 50-ի մէջ զարմանալով կարդացի կաթոլիկէ ս. Գէորգ եկեղեցում հայ զինւոր- ների հաղորդութեան եւ ապա ճաշի մասին հաղորդած տեղեկութիւնը: Զարմացած էի, ո- ռովեւտեմ: Արարանակիցներին չա, որը մեծ զգոհութիւն էր արտայայտում հայ զինւորնե- րի ս. Գէորգ եկեղեցի դալու եւ հաղորդվելու պատճառով եւ մինչեւ անգամ յորդորում էր միաբանակիցներին, որ արգելք լինեն հետե- ւեալ տարիներում, առարկելով թէ զինւորնե- րը լցվելով եկեղեցին, մեր ժողովրդականներն ուրիշ եկեղեցիներ են սկսում յաճախել եւ այդ- պիսով գանձանակը պակասում է:—Ահա նոյն այդ Մատինեանց քահանան այնպէս փառաբա- նված էր: Ուստի կարեւոր եմ համարում յայտ- նել ճշմարտութիւնը: Ինչպէս անցեալ տարի, այնպէս եւ այս տա- րի, իմ պաշտօնական յայտարարութեան համա- ձայն № 98 եւ 27, քաղաքի բոլոր հայ զինւորները մեծ պատի առաջին շարքով խո- տովանվեցին եւ հաղորդվեցին ինձ մօտ ս. Գե- օրգ եկեղեցում: Ուրիշ տեղերում, օրինակ Գօ- րի, Խախատես լինելով թէ բարեպաշտ անձ- նաւորութեան եւ թէ ժողովրդականների պառ- րաստած ճաշը ինչպիսի լաւ տպաւորութիւն է գործում եւ միջնորդում պանդուխտ եւ մի- թարութեան կարօտ հայ զինւորներին, անցեալ տարի առաջարկեց ընկերակից միաբաններին, որ գործակցեն ինձ եւ յորդորեն բարեպաշտ ժողովրդին՝ նոյն տեսակ ճաշով հիւրասիրելու եւ միջնորդելու Թիֆլիսում ծառայող հայ զին- ւորներին: Առաջարկեց ընդունելութիւն գտաւ եւ կարճ միջոցում մեր ժամաւորները եւ ծխա- կանները թէ դրամով եւ թէ նիւթով բոլոր պիտոյքը առատութեամբ եւ աւելորդով հայթ- հայթեցին: Մնում էր ծախսարարութիւնը եւ ճաշի պատրաստութիւնը տեսնել: Այդ գործը յանձնվեց Մատինեանց քահանային, իբրեւ չա- փաւորութեան եւ ինչպիսիքութեան յայտնի հեղ- չակ ունեցող եւ վարժ անձի, որը եւ կատա- րեց թէ անցեալ եւ թէ ներկայ տարին, թէ եւ մինչեւ այսօր դեռ նրանից հաշիւ ստանալու բաղդը չունեցանք:

Ինչ վերաբերում է Մատինեանց քահանայի սեղանի գլուխ անցնելուն, յորդորներին եւ «բարեբար»-ների չարքը դասելուն, այդ մասին էլ այսքանը բաւական կը համարեմ: Եթէ մի ուրիշը չը գիտէ, գոնէ մենք Թիֆլիսի քահա- նաներս, լաւ գիտենք, թէ որպիսի մեծ ճրագով պիտի փնտռեց քահանաներին մէջ «բարե- բարներ», մասնաւոր այնտեղ, ուր պ. լրատուն է գտել: Այդ կարող է գտնանալ եւ ամեն մէկը, եթէ փոքր ինչ հետաքրքրվի մեր քահանանե- րով եւ կը տեսնէ, որ փառաբանվածները ոչ թէ «բարեբարութեան», այլ հասարակ պար- տականութիւնների տարակաւն խրատներն առ- նելու պէտք ունեն:

Հիմա սեղանի գլուխ անցնելու մասին Ան- ցեալ տարի այդ պարզ եւ ընթացիկ պարտա- կանութիւնը եւ կատարեցի: Այս տարի եւս ինքը պատարագիչ լինելով եւ ճաշակելով 250 չափ զինւորների եւ բաւական ժողովուրդ, հետեւապէս յօդուած, եթէ աւելացնեմք, որ փոքր ինչ էլ ինքս հիւանդ էի գգում ինձ, չը կարողացայ մնալ եւ մասնակից լինել սեղանին, ուստի խնդրեցի միաբաններինց մէկին ինձ փոխարինելու, սակայն նա եւս ժողովրդի հոգեւոր պիտոյքի պատճառով չը կարողանա- րով, այդ շատ սովորական եւ հասարակ առա- բէզը մնացել էր Գարեգին քահանայ Մատի- նեանցին: Ինչ կար այս ամենի մասին գունաւ փելու, եւ չը հասկացայ: Կովկասեան հայ զինւորների աւագ քահանայ Ստեփանոս Սամուէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, լսելով Թիֆլիսի նահանգապետի առաջարկութիւնը՝ հո- գեկան հիւանդների քաղաքային ապաստա- րանը ընդլայնելու մասին, որոշեց հէջ հիմա ընդլայնել այդ ապաստարանը՝ աւելացնելով 5 մահճակալ եւ դրա համար տալ քաղաքային գանձարանից միանուագ 260 ռ. 45 կ. եւ իւ- րաքանչիւր տարի 451 ռուբլի:

«Իվերիա» լրագրի ասելով այս մօտ օրերում «Վրացիների մէջ գրագիտութիւն տարածող ըն- կերութիւնը» ընտրեց մի յատուկ յանձնաժո- ղով եւ նրան յանձնեց վրաց հասարակական գործիչներին արձաններ կանգնեցնելու գործը: Մասնաժողովը արդէն պատուիրեց Անջէլօ Ան- դրօյէտիին երեք արձան՝ Բարաթաշվիլի, Դիմիտրի Բաքրաձէի եւ Ռօմաշվիլիի համար, որոնք պէտք է պատրաստ լինեն սեպտեմբեր ամսին:

«Россия» լրագրում կարգում ենք. «Երկա- րասեւ բացակայութիւնից յետոյ՝ պ. Շահա- մեանը հիւպատոսի, մարտի 30-ին, տուեց մի կօնցերտ քաղաքային կրէդիտի ընկերութեան դահլիճում: Պ. Շահամեանի երգեցողութիւնը ինքնուրոյն է. նրա մէջ նկատվում են կիւր, եռանդ, ճնշութիւն, տեղ-տեղ երեւում է եւ տաղանդ, բայց չը կայ ոճ, ինչպէս որ չը կան լուրջ երաժշտական դպրոցի հետքեր: Պ. Շահա- լամեանի երգեցողութեան ամենալաւ կողմը նրա ձայնն է, որ հնչուն է, ինչպէս մետաղ եւ չէ կորցրել մինչեւ հիմա իր յատկութեան ներք, չը նայելով որ պ. Շահամեանը բաւա- կան երկար ժամանակ գործում է երգչի առ- պարիզում: Սա այն ձայններից մէկն է, որոն- ցից հարաւի, առողջութեան եւ գուարթու- թեան անուշահոտութիւն է փչում: Կօնցեր- տանում երգում էր թէ ոուս եւ թէ օտարազգի հեղինակների պիեսներ, երգում էր այնպէս, որպէս պատահում էր, երբեմն գուարճանքով ունկնդրներին շատ աջող երգեցողութեամբ եւ երբեմն տալով հասարակութեան բաւա- կան հում եւ անմշակ կտորներ: Բացի պ. Շահամեանից՝ կօնցերտին մասնակցում էին երիտասարդ, բաւականին տաղանդաւոր հայ կոմպոզիտոր պ. Սպենդիարեան իր հե- ղինակութիւններով, տ. Տէրեան-Ղօղանեան, որ մեծ աջողութիւն ունեցաւ չնորհիւ իր գրա- ւիչ եւ գեղարվի ձայնի ու կենդանի կատար- անքով: Սովորական աջողութեամբ նուագում էր ջութակահար պ. Նալբանդեան: Բաւական ա- ջող երգում էր նոր սկսող երգչուհի տ. Սպեն- դիարեան:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Մեր նոր նահան- ցապետ Սամոյլով եկաւ իր պաշտօնաւորներն եւ պաշտօնական անձանց ընդունելութիւնից յե- տոյ, ընդունեց եւ քաղաքի ներկայացուցիչնե- րին, որոնց հետ խօսելիս, յայտնեց որ քաղաքի համար անհրաժեշտ է երկու մեծ պէտքերի շու- տափոյթ հոգալը—մաքուր ջուր բերելը եւ մի միջնակարգ ուսումնարան հիմնելը: Ի դէպ, պէտք է նկատել, որ ամբողջ Կարսի նահանգում եւ Ա- լէքսանդրօպոլի գաւառում մի միջնակարգ դպ- րոց չը կայ: Միթէ ամօթ չէ այստեղի աղքա- ընակութեան համար: Իսկ Կարսում միայն ե- րեք դպրոց կայ—մի քաղաքային տղայոց, մի երեք դասարանեան աղջկանց եւ մի հասա էլ երրորդ կարգի միդասեան տղայոց մասնաւոր դպրոց, որոնք համեմատելով տղակալ աղքա- ընակութեան թւի հետ, շատ քիչ են: Այնպէս որ քաղաքի չքաւոր դասակարգի որդիների ա- հագին մեծամասնութիւնը կամ փողոցներում է մեծանում, կամ փոքր հասակից չնչին խա- նութիւններում ծառայութեան է մտնում եւ ժա- մանակից առաջ մարդ դառնում:

ԽԱՆՔԵՆԴԻԻՑ (Շուշու գաւառ) մեզ գրում են. «Երկու շաբաթ առաջ աւազակութեան հետեւեալ դէպքը տեղի ունեցաւ Խաչէնի Բաղ- ուշաւ գիւղում: Աւազակները կէս գիշերին բազ անկողով գիւղացիներից մէկի գոմի դուռը տաւարը դուրս են քշում տանելու: Այդ մի- ջոցին տանտէրը, որ քէֆից է գալիս լինում իր մի բարեկամի անից, տեսնում է այդ եւ անեցիկներին հարայ տալով՝ վազում է տաւարի ետեւից: Տեսչիները դուրս են թափվում հէջ այն ժամանակ, երբ տանտէրը համեցնով աւա- ղակներին, յանկարծակի գրկելով՝ բռնում է նրանցից մէկին: Միթութեան մէջ որոտում է աւազակներից մէկի արագաձիգ հրապանը եւ փոխանակ տանտիրոջ, աւազակը տապալում է գետին իր ընկերոջ գնդակից: Միւս կող- մից տանցիները սկսում են կրակել եւ մնա- ցած աւազակները փախչում են: Միւս օրը դէպի տեղը ժամանած գաւառական պրիստա- վին դեռ կենդանի աւազակը հրաժարվում է ընկերների անուաները տալուց եւ ասում է՝ թէ հայերն են ինձ գնդակահարել:

ԱՍՏԻՍԱՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ 1899 թւից մեզանում գոյութիւն ունի թատե- րասէրների մի խումբ, որի նպատակն է տալ ժողովրդական ներկայացուցիչներ հանրամատչելի գնքերով: Այս խումբը մարտի 19-ին, կիրակի

